

25.291

Ո. ՊՈՊՈՎԱ

— ՄԻԱՍԻՆ ԿՈՒՏԱԿԵՆՔ,
ՄԻԱՍԻՆ ԿԱՌՈՒՑԵՆՔ —

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ Հ. Խ. Ս. Հ. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ № 296
ԱՇԽԵՆԱԴՐԱՄԱՐԿՆԻ

332.2

7-84

ՅԵՐԵՎԱՆ

1928

105 JAN 2010

32.2
11-84
wr

Ո. ԳՈՐԴՈՎԱ

23.07.2013


1003
14147
14147

ՄԻԱՄԻՆ ԿՈՒՏԱԿԵՆՔ,
ՄԻԱՄԻՆ ԿԱՌՈՒՑԵՆՔ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ Հ. Խ. Ս. Հ. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ № 296
ԱՇԽԵՆԱԴՐԱՄԱՐԿՂԻ

ՅԵՐԵՎԱՆ

1928



I. ՄԵՐ ՎԵՐԱԿԱՌՈՒՅՈՒՄ

ՄԵՆՔ ԿԱՌՈՒՅՈՒՄ ԵՆՔ

Ով ուշագիւր լրագիր է կարդում, նա տեսնում է, թե ինչպես մեր նոր խորհրդային շինարարությունը վերջին տարիներում արագ թափով առաջ է գնում: Լրագրերում մենք այսպիսի հաղորդակցություններ ենք կարդում՝

«Բացված է խորհրդային Իշխանության որոշ կառուցված առաջին մանվածային Փարբիկան... Վոլխովստրոյի ելեկտրո-կայանից հետո սկսեց աշխատել Թիֆլիսի մոտի ելեկտրակայանության յերկրորդ հսկան... Կառուցվում է խոշոր սառցարան... Դնեպրոստրոյում արդեն խիում են մուրճերը... Տարի որոշ գյուղում չկար վոչ մի տրակտոր, իսկ այժմ կա 30 հազար...»

Բոլորը չես կարող թվել: Լավ է ինքդ հետեւա լրագրերին:

Որեց-որ ծավալվում է նոր շինարարությունը:

Արդեն անցել են այն ժամանակները, յերբ տրիում էին դաշտերը կիսատ ցանելու համար, յերբ ուրախանում էին, վոր նորից ծուխ է բարձրանում քայքայման տարիներում լուռ մնացած Փարբիկայից: Այժմ արդեն համարյա առաջվա ամբողջ վարելահողը հերկված ու ցանված է: Արյան գնով հին տերերից նվաճած բոլոր պետական Փարբիկաներն ու գործարանները բանում են: Բայց մենք չենք կարող բավականանալ դրանով: Մենք չենք կարող զարգացնել մեր տնտեսությունը:

նը՝ միայն սգովելով Փարբիկաններից ու կալվածա-
տերերից նվաճած հին ժառանգությունից: Մեզ հար-
կավոր և նորից վերասարգավորել և արդյունաբերու-
թյունը և գյուղատնտեսությունը: Մեզ անհրաժեշտ են
նոր Փարբիկաններ, նոր մեքենաներ, դադգյահներ, նոր
էլեկտրական կայաններ և գյուղատնտեսական գոր-
ծիքներ:

Մենք վերանորոգում ենք հին Փարբիկանների ու
գործարանների սարքավորումը և կառուցում ենք նոր
գործարաններ ու Փարբիկաններ վորպեսզի շատ ապրանք
ունենանք, վորպեսզի այդ ապրանքները լի-
նեն լավ վորակի և վորպեսզի դրանք ար-
ժենան ըստ հնարավորության եժան: Բանվո-
րագյուղացիական մասսաների պահանջները ա-
ճել են: Գյուղացիները և բանվորներն իրենք են հիմա
կառուցում իրենց նոր կյանքը և ուզում են դա կառու-
ցել ավելի լավ ձևով և լրիվ, քան առաջ եր, հին կար-
գերում: Իսկ դրա համար հարկավոր է հնարավորու-
թյուն ունենալ այնպիսի ապրանքներ և անհրաժեշտ
գործածության առարկաներ ձեռք բերելու, վորոնցով
կուշտ կերպով անցյալում ոգտվում էյին միայն կալվա-
ծատերերը, առևտրականները, Փարբիկանները: Յեւ
դա պարզ է: Մենք նրա համար հեղափոխություն չկա-
տարեցինք, վորպեսզի ապրենք այնպես, ինչպես ապ-
րում էյինք ցարի որով: Մեզ հարկավոր է լավ ապրել,
ավելի քան լավ: Թե բանվորը, թե գյուղացին ուզում են
լավ ուտել, լավ հագնել, գրքեր ունենալ, դուրս պրծնել
խաւարի ու կեղտի միջից:

Մեր արդյունաբերությունն այժմ էլ շատ է արտա-
դրում, քան պատերազմից առաջ: Բայց մենք մինչև
այժմ չենք կարողացել լուծել վոչ ապրանքների վորա-
կի լավացման և վոչ էլ դրանց թանկության խնդիրնե-
րը: Դրա գլխավոր պատճառն այն է, վոր դժվար է
եժանացնել ու լավացնել ապրանքների մշակումը հին
Փարբիկաններում մնացած հին մեքենաներով ու դադ-
գյահներով:

Մեզ հարկավոր է արտադրել վոչ միայն շատ չիթ,
կոշիկ կամ մեխեր, այլև մենք պետք է ինքներս կառու-
ցենք չիթ կամ կոշիկներ պատրաստող դադգյահներ ու
մեքենաներ: Ինքներս պետք է պատրաստենք այն յեր-
կաթը կամ մետաղը, վորոնցից մեխեր կամ գութանի
խոփեր պիտի չինվեն: Սա ամենից գլխավորն է:

Զե՞ վոր մենք ստիպված ենք մեր վոսկով արտա-
սահմանից դեռ շատ մեքենաներ, դադգյահներ ու գոր-
ծիքներ գնելու: Իսկ մենք պետք է ինքներս կառուցենք
մեր տնտեսությունը անկախ արտասահմանյան կապի-
տալիստներից: Մեր նպատակն է՝ հասնել արտասահ-
մանյան արդյունաբերության և տեխնիկային, իսկ հե-
տո նրանից ավելի առաջ անցնել: Միայն այն ժամանակ
մենք կարող կլինենք համարձակ կերպով նայել դրսից
յեկող բոլոր վտանգներին:

Մեր արդյունաբերությունն այժմ առաջ է ընթա-
նում ավելի արագ, քան գյուղատնտեսությունը: Յեւ
այս ընթացքն ուղիղ է, քանի վոր առանց արդյունա-
բերության չի կարելի լավացնել և գյուղատնտեսու-
թյունը: Անցյալում գյուղացին իր տնտեսությունը վա-
րում եր իր մեջքի ուժով, առանց կատարելագործված
գործիքներից և գյուղատնտեսական մեքենաներից ոգ-
տվելու: Իսկ այժմ հարկավոր է թեթևացնել գյուղացու
աշխատանքը: Թող այժմ մեքենան աշխատի գյուղացու
համար: Հարկավոր է գյուղը հավասարեցնել քաղաքի
հետ, ազատել գյուղն անբերիությունից, ճանապարհ-
ներ չունենալուց, գյուղացիական խրճիթում և գյուղա-
ցու մտքում տիրող խավարից:

Արդյունաբերությունը կողմի վերակառուցելու
գյուղատնտեսությունը, ամբողջ գյուղացիական կյան-
քը: Արդյունաբերությունը կտա գյուղին դութան և
տրակտոր, կալսելու մեքենա, էլեկտրականություն ու
հանրային պարարտանյութեր:

Տարեց-տարի աճում է գյուղացիության պահանջը՝
մեքենաներ և լավ տեսակի գործիքներ ձեռք բերելու
համար: Իսկ մեր արդյունաբերությունը դեռ չի կարո-
ղանում բավարարել այդ պահանջը: Պարզ է, վոր մենք

պետք է ավելի լայն ընդարձակենք մեր արդյունաբերությունը: Հակառակ դեպքում հնարավոր չէ նոր ուղիով տանել նաև գյուղատնտեսությունը:

Գյուղացուն անհրաժեշտ է վերամշակել գյուղատնտեսական մթերքները՝ կաթը, արևածաղիկը, բանջարեղենը, բուրդը, կաշին: Գյուղացիական շատ մթերքներ անտեղի կորչում են կամ քիչ յեկամուտ են տալիս, վորովհետև հարկավոր է նախ և առաջ վերամշակել դրանք և նախապատրաստել հետագա արտադրման կամ վաճառման համար: Այստեղ արդյունաբերությունը կոգնի գյուղացուն և հնարավորություն կտա բարձրացնելու գյուղատնտեսության յեկամուտը՝ մթերքների վերամշակման նոր ֆաբրիկաներ կառուցելու, գյուղատնտեսական գործիքներ և անհրաժեշտ իրեր պատրաստելու միջոցով:

Բացի այդ, յեթե ծավալվի արդյունաբերությունը, ապա աշխատանք կծարվի նաև այն ազատ բանվորական ձեռքերի և գործազուրկների համար, վորոնք ավելի ու ավելի գյուղից գալիս են քաղաք: Այս բոլոր պատճառներով՝ արդյունաբերության աճումը նույնքան կարևոր է գյուղացիության, վորքան բանվորության համար:

Մեր տնտեսության մեջ արդյունաբերությանն առաջին տեղը տալը նշանակում է ինդուստրացման յեկարկել յերկիրը*): Ինդուստրացում—սա արդյունաբերության և գյուղատնտեսության վերասարքավորումն է, նոր շինարարություն և մեքանաների սարքավորման սեփական արտադրության լայն զարգացումը:

Խորհրդային յերկրի ինդուստրացումը մեր առաջիկա տարիների կարևորագույն խնդիրն է: Թե կոմունիստական կուսակցությունը և թե խորհրդային պետությունն իրենց աշխատանքների մեջ առաջին տեղն են դնում այդ խնդիրը:

*) Արտասահմանում արդյունաբերությանն ասում են ինդուստրի: Այստեղից է և ինդուստրիացում խոսքը:

Ինդուստրացումը—սա դատարկ խոսակցություն չէ: Նայեք, թե ինչ է կատարվում ձեր շուրջը և դուք կտեսնեք, վոր ինդուստրացումը մեզ մոտ որ—որի առաջ է գնում: Ինդուստրացման գործում գլխավորը մեքենակառուցումն է, ելեկտրոկայանների հիմնադրումը և մետաղային արդյունաբերության զարգացումը: Տեսնենք, թե ի՞նչպես ենք մենք զարգացնում մեր արդյունաբերության այդ կարևորագույն ճյուղերը:

Մեզ մոտ այժմ ելեկտրական ուժն յերկու և կես անգամ ավելի յե, քան հեղավոխությունից առաջ: Մենք ընդարձակեցինք հին կայանները, կառուցեցինք նորերը, նրանց թվում այնպիսի հսկաներ, վորպիսիք չեն յեղել ցարի որով, որինակ՝ Վոլխովայի և Չեմոավչալայի ելեքտրոկայանները: Մենք արդեն սկսել ենք Ինեսպր գետի վրա ելեքտրոկայան կառուցելու աշխատանքները, վորը ելեքտրական ուժ կտա մի շարք ֆաբրիկաների ու գործարանների, նաև գյուղատնտեսական մթերքները վերամշակելու և գյուղացիական հողերը մեկնորացիայի յենթարկելու, այսինքն հողերի լավացման աշխատանքների համար (ճահիճների չորացում, վորոգում և այլն):

Նման շինարարությունն ելեքտրոֆիկացիայի առարկիցում նշանակում է՝ նոր ելեքտրական հիմունքով վերակառուցել մեր ամբողջ ժողովրդական տնտեսությունը: Անցյալում ֆաբրիկաների և գործարանների մեծամասնությունը ոգտվում էր գոլորշու շարժիչներով, այժմ արդեն ելեքտրոֆիկացիայի զարգացմամբ հնարավոր է մեքենաներն աշխատեցնել * ելեկտրական ուժի միջոցով, բացի այդ՝ ելեկտրականության միջոցով հալում են մետաղներ, լուսավորում և տաքացնում ֆաբրիկաները: Յեվ այս բոլորն արագացնում ու բարելավում է մեր արդյունաբերական ձեռնարկությունների աշխատանքները:

Մեքենակառուցումը նույնպես մեզ մոտ արագ

Թափով առաջ է գնում. մենք արդեն մեքենաներ ենք շինում 34½ տոկոսով ավել, քան պատերազմից առաջ: Իսկ գյուղատնտեսական մեքենաներ՝ 42 տոկոսով ավել: Պատերազմից առաջ Ռուսաստանում տրակտորներ չէին պատրաստում, մինչդեռ այժմ մեզ մոտ անընդհատ աճում է տրակտորների արտադրությունը, և անցյալ տարի մենք 3 միլիոն ուղարկեցինք տրակտոր ենք պատրաստել:

Պետությունն այս տարի հիմնական շինարարություն մեջ դրել է 3 միլիարդ 450 միլիոն ուղարկել: Դրանից 1166 միլիոն ուղարկել հատկացվել է արդյունաբերության, 280 միլիոն ուղարկել՝ երկտրական շինարարության, 495 միլիոն ուղարկել՝ տրանսպորտին, 625 միլիոն ուղարկել՝ գյուղատնտեսության:

Մետաղային արդյունաբերությունը, վորի զարգացումը հատկապես կարևոր է յերկրի ինդուստրացիայի համար, խոշոր միջոցներ է պահանջում պետությունից: Այն փողերը, վոր դրվում է ամբողջ արդյունաբերության մեջ, դրանց մեկ քառորդից ավելին ծախսվում է մետաղային արդյունաբերության համար: Այստեղ մենք դեռ չենք հասել նախապատերազմյան չափին: Չուղունը և մետաղը մեզ մոտ առայժմ պակաս են, քան մինչ պատերազմը: Հենց դրա համար է, վոր մենք այստեղ ավելի շատ միջոցներ ենք ծախսում, քան ժողովրդական տնտեսության ուրիշ ճյուղերում:

Նոր շինարարություն այս տարի մենք հատկացրել ենք 280 միլիոն ուղարկել, այսինքն՝ անցյալ տարվա վանից 100 միլիոն ուղարկել ավել: Անցյալ տարի ավարտվել է 110 միլիոն ուղարկել. նոր գործարանների կառուցումը, իսկ այս տարի կավարտվի 188 միլիոն ուղարկել: Պատրաստություն է տեսնվում կառուցելու մի քանի խոշոր գործարաններ, այն է՝ Ուրալի լեռնային և մետաղային արդյունաբերության համար մեքենաների գործարան, մետաղաձուլական գործարան՝ Ուրալում, տրակտորների գործարան՝ Ստալինգրադում: Ռոստովում կառուցվում է գյուղատնտեսական մեքենաների մի խոշոր գործարան:

Կառուցվում են խոշորագույն շախտաներ. նավթային շրջաններից նավթը ծովային նավահանգստները տեղափոխելու համար անց են կացվում նոր ճանապարհներ:

Տրանսպորտի բարելավումը, հաղորդակցության ճանապարհների զարգացումը, վոր անհրաժեշտ են արդյունաբերության զարգացման համար, նույնպես շարժվում է առաջ՝ խոշոր ծախսեր պահանջելով:

Սկսված է Սեմիբեյենի յերկաթուղային ճանապարհի կառուցումը, վոր հսկայական նշանակություն կունենա թե արդյունաբերության և թե գյուղատնտեսության համար: Այդ ճանապարհով Սիբիրից հաց կփոխադրվի բամբակադործական շրջանները: Նշանակում է՝ այդ շրջաններում ավելի շատ բամբակ կցանեն, վորին այնքան կարիք է պղծում մեր տեքստիլ արդյունաբերությունը:

Հնարավոր է, վոր հենց այս տարի սկսվի Վոլգայի և Դոնի միջև կառուցվող ջրանցքի աշխատանքները: Վոլգայից ուղիղ և եթան ճանապարհ կբացվի դեպի ծովային նավահանգիստները: Սիբիրի և մերձվոլգյան հացն ու գյուղատնտեսական այլ մթերքները այդ ճանապարհով կտարվեն դեպի ծով՝ արտասահման փոխադրելու և ծախելու համար. Ուրալի հանքը կտարվի դեպի Դոնբասի շրջանները, իսկ Դոնբասի ածուխը՝ դեպի Ուրալի գործարանները:

Վերածնվում է և գյուղատնտեսությունը: Այստեղ ևս խոշոր դումարներ են ծախսվում: Յերկու տարվա ընթացքում, խորհուրդների Համաժողովենական 3-րդ Համագումարից մինչև չորրորդը, գյուղատնտեսության վրա ծախսված է մեկ միլիարդ հարյուր միլիոն ուղարկել: Այս տարի գյուղատնտեսության վրա ծախսվում է մոտավորապես 625 միլիոն ուղարկել: Ցարի կառավարությունը յերկու անգամ պակաս էր ծախսում գյուղատնտեսության վրա:

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՐԿԱՎՈՐ Ե ՇԱՏ ՄԻՋՈՑՆԵՐ

Այս ամբողջ հիմնական շինարարության, մեր ամբողջ ժողովրդական տնտեսության ինդուստրիացման վրա խոշոր գումարներ են ծախսվում: Յերեք տարվա ընթացքում, հաշվելով նաև 1927 թիվը, հիմնական շինարարության համար ծախսված է հինգ միլիարդ յոթ հարյուր միլիոն ութսուցի: զրանից 1926-27 տարում՝ յերկու միլիարդ հինգ հարյուր քառասուն չորս միլիոն (2 անգամ ավել 1924-25 տնտեսական տարվա դիմաց):

Առաջիկա հինգ տարում Խորհրդային պետությունը նախատեսում է բաց թողնել հիմնական ծախքերի համար 15-20 միլիարդ ութսուցի:

Այս միջոցները գործի մեջ են դրվելու յերկար տարիներում: Գործարանները մեկ տարում չեն կառուցվում, իսկ այնպիսի հսկայական կառուցումները, ինչպիսիք են Դնեպրոստրոյը և Սեմիբեյենի յերկաթուղային ճանապարհը, կարող են ավարտվել միայն 4-5 տարում: Դրանից արագ չեյին կառուցի և ոտարեկրյա կապիտալիստները, իսկ մենք սեփական միջոցներով ենք կառուցում դրանք:

Իր ժամանակին այդ շինարարության ծախքերն ամբողջապես կարգարացվեն այն հսկայական ոգուտով, վոր նրանք կտան մեր տնտեսությանը, րնդ վորում դրանք պետությունը չառ միջոցներ կտնտեսեն: Որինակ՝ Վոլխովի ելեկտրոկայանը շնորհիվ նրա, վոր աշխատում է ջրի ուժով՝ Լենինգրադի Փարբիկաներին չառ եժան ելեկտրական եներգիա յե տալիս և միայն դրանով տնտեսում է պետության համար տարեկան ինն միլիոն ութսուցի:

Բայց առայժմ հսկայական գեվարությունամբ, հրուկայական լարվածությամբ ենք միջոցներ կուտակում այս ամբողջ շինարարության համար:

Պետությունը փող է կուտակում բոլոր ավելորդ ծախքերը կրճատելով, տնտեսության և յերկրի կառու-

վարման գործում խնայելու միջոցով: Բանվորները գործարաններում ու Փարբիկաներում ձգտում են այն բանին, վոր ավելի լավ դրվի արտագրությունը, լավ ոգտագործվեն հում նյութը, վառելիքը, մեքենաները և իրենց աշխատանքը, վորպեսզի դրանով եժանացվեն ապրանքները և վաստակ տրվի պետության: Յեվ այսպիսով արդյունաբերությունը հենց ինքն իր հիմնական շինարարության համար խոշոր միջոցներ է կուտակում:

Բանվորա-գյուղացիական իշխանությունը՝ քաղաքների և գյուղերի խորհուրդները նույնպես լարում են իրենց բոլոր ուժերը, վորպեսզի տնտեսեն պետության կոպեկները:

Որեց-որ համառ պայքար է տարվում անտնտեսավարության, չռայումների ու ժողովրդական միջոցները վատնելու դեմ:

ՄԵՐ ՈՒԺԵՐՈՎ

Նա, ով մասնակցում է հատարական աշխատանքներին, տեսնում է, թե ինչպես բանվորա-գյուղացիական յերկիրը լարում է իր բոլոր ուժերը, վորպեսզի փող կուտակի մեր ամբողջ տնտեսության վերականգնման, յերկրի ինդուստրացման համար:

Մենք չենք կարող հույս դնել ուրիշ յերկրների ոգություն վրա: Արտասահմանյան կապիտալիստները մեզ հեռ առևտուր են անում, բայց վարկ, դրամական փոխառություն տալիս են վոչ այնքան հոժարությամբ: Նրանք մեզ կտային այն պայմանով, վորպեսզի նրանց ճորտը գառնայինք, նրանք կտային մեզ վարկեր, յեթե մենք համաձայնվեյինք վերադարձնել ոտարեկրացիներին այն Փարբիկաները, վորոնց նրանք տիրում էյին Թուսսատանում ցարի որով, և վճարեյինք նրանց ցարական պարտքերը:

Իհարկե այս բոլորին մենք չենք համաձայնվի, մեզ հարկավոր չեն ոտարեկրյա վարկերը, յեթե դրանց

համար մենք պետք է հրաժարվենք հեղափոխության նվաճումներից:

Հենց դրա համար է, վոր մենք պետք է հույս դնենք վոչ թե ոտար վարկի, վոչ թե ոտար փոխառությունների, այլ մեր աշխատավորական կոպեկների վրա: Իրենց պետությանը պետք է վարկ տան և տալիս են իրենք՝ խորհրդային յերկրի բանվորներն ու գյուղացիները:

Ժողովրդական տնտեսության ամրապնդման ու զարգացման համար այս վարկը տրվում է պետությանը՝ պետական փոխառությունների միջոցով, խնայողական դրամարկղների միջոցով և վարկային կոոպերացիայի միջոցով: Գնելով փոխառությունների պարտատոմսեր, փողը խնայողաճարկղներում, կոոպերացիային պահ տալով բանվորը և գյուղացին արդեն իսկ խոշոր ոգնություն են ցույց տվել պետության: Բայց և այնպես այս ոգնությունն անբավարար է: Դեռ ազգաբնակչության ձեռքում չառ մանր խնայողություններ կան և դրանք բնկած են առանց ոգուաի:

ԲՈՒՈՐ ԽՆԱՅՈՒՄՆԵՐԸ—ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՏԱՎՈՐԱ- ԿԱՆ ԳԱՆՁԱՆԱԿՈՒՄ:

Միայն այս դեպքում մենք կարող կլինենք հաստատասել, վոր կապրենք և ինքներս կկառուցենք մեր տնտեսությունը՝ առանց արտասահմանյան կապիտալիստների ոգնության:

2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀՍՄԱՐ ՄԻՋՈՑՆԵՐ ԿՈՒՏԱԿԵՆԲ

ԱՄԵՆ ՄԻ ԿՈՊԵԿ—ԳՈՐԾԻ ՄԵՋ

Ընդ հանուր գործի համար միջոցների կուտակման

այս հսկայական ու գծվարին աշխատանքի մեջ ամեն մեկը կարող է ոգնել:

Ամեն մի գյուղացի կարող է ոգնել իր հասարակական աշխատանքով՝ գյուղխորհրդի, շրջգործկոմի, փոխոգնության կոմիտեի, կոոպերատիվ աշխատանքների մեջ խնայողություն անցկացնելու գործում:

Շատ և շատ գյուղացիներ կարող են ոգնել և իրենց անձնական միջոցների կուտակումով: Մա բնագնաուր շինարարությանն ոգնելու այն ճանապարհն է, վորի վրա շատ քիչ են ուղադրություն դարձնում մինչև իսկ առաջագեմ գյուղացիները:

Մեղ մոտ պետական աշխատավորական խնայողական դրամարկղներում չա՞տ են արդյոք գյուղացիական ավանդները: Ընդամենը 14 միլիոն ուրբլի: Ամբողջ ավանդների 6 տոկոսից էլ պակաս, մինչդեռ մեր յերկրում գյուղացիներն ամենից շատ են:

Գյուղացիների սովորական խոսակցությունն է՝ «Յհ, ի՞նչ փող ունենք մենք. ի՞նչ կարող ես անել մեր փողով»:

Բայց չե՞ վոր կոպեկներից են գոյանում միլիոնները: Յարի ժամանակ գյուղացիների ավանդներից խնայողաճարկղներում հավաքվել եր մեկ ու կես միլիարդ ուրբլուց ավել:

Կարո՞ղ է թեկուզ մի գյուղացի ասել, վոր իր մոտ վոչ մի կոպեկ անտեղի չի կորչում: Հաճախ հենց նրա համար է անտեղի կորչում, վոր կարծում են թե կոպեկով կամ տաս կոպեկով վոչինչ չի լինի անել: Այդ պատճառով էլ ավելցուկ կոպեկն ու ուրբլին հաճախ ծախսվում են աննկատելի՝ չգիտես թե ինչի համար: Գյուղացուն հարկավոր է ասենք, ձեռք բերել իր պտղերի կամ տնտեսության համար մի վորեւս բան, մինչդեռ յեղած փողերը մանր մանր ծախսվում են, իսկ տնտեսության մեջ վոչինչ չի ավելանում: Այնինչ, խնայողաճարկղում կարելի յե կոպեկներով փող հետ գցել և ոչսպիտով կուտակել անհրաճեղ գումար՝ կոչիկ, կտոր, անիվ, հանգային պարարտանյութեր, ձի,

կով գնելու համար. մի^{թե} ընտանեկան պետքերի և տնտեսութեան անհրաժեշտ ուրիշ քիչ իրեր կան գնելու:

Ինչքան եւ վոր փոքր լինի գյուղացու տնտեսութեանը, այնուամենայնիւ նա պետք է պահի իր հաշիւը, խնայողաբար և կանոնավոր ծախսի իր միջոցները: Քիչ միջոցներ ունենալու դեպքում այսպիսի հաշիւ պահելն ավելի անհրաժեշտ է: Մի վորեւէ բուրժուա, վորը հեշտ կերպով է փող ձեռք բերում, կարող է քամուն տալ իր փողերը: Նրան չատ փող կա, նրա համար աշխատում են ուրիշները: Մինչդեռ աննշան ու քրտինքով աշխատած միջոցներն անհրաժեշտ է ծախսել խնայողաբար և հաշիւով: Այս տեսակետից խորհրդային յերկրի ամեն մի անդուլ աշխատողին որինակ թող ծառայի իր պետութեանը, վորն իր բյուջեն, այսինքն յեկամուտների և ծախսերի նախահաշիւը կազմում է խիստ հաշիւով ու նախորոք սահմանված կայուն պլանով ծախսում պետական փոշ աշխարհ եւ խոշոր միջոցները:

Այսպիսի մի կայուն պլան պետք է ձգտի ունենալ նաեւ ամեն մի գյուղացի իր տնտեսութեան մեջ: Հունձը և գյուղատնտեսական արդյունքները համաքելուց հետո, գյուղացին պետք է նախորոք պարզի իր անհեաաձգելի կարիքները, հաշիւ՝ իրեն վորքան միջոցներ են հարկավոր մինչև նոր հունձը, վո՞րքան պետք է ծախսի ընտանիքի հետ միասին ապրելու, հագուստի, փոսնամանների համար, տնտեսութեան իրեր ձեռք բերելու կամ վերանորոգելու համար: Այն ժամանակ նա գլխի կրնկնի, թե ինչ կարող է գնել, ինչ չի կարող, վորտեղ պետք է կրճատի ծախքերը և վորտեղ ավելին ծախսի: Այն ժամանակ նրա համար պարզ կլինի, թե իր տնտեսութեան մեջ ավելցուկներ, ազատ միջոցներ, մասնակի յեկամուտ կլինե՞ն արդյոք, վո՞րքան և ինչի՞ց կստացվին այդ ավելցուկները: Սա նշանակում է՝ կազմել իր տնտեսութեան կայուն ծրագիրը դալ տարվա համար: Աս աշխ մեզ մոտ բոլոր գյուղացիներն էլ չեն կարողանում այսպես հաշիւով ու ծրագրով վարել իրենց տնտեսութեանը: Ի՞նչ մեղքը թագցնել աշունը:

յերը գյուղացու մոտ փող է հավաքվում, հաճախ նա ծախսում է դա տանց վորեւէ հաշիւի, հարսանիքից հարսանիք է գնում, ապա կերուխում և սարքում: Եւ տաջը չի նայում, տաում է՝ «Յուրա կգնանք, չենք մեռնի, մի կերպ կապրենք»:

Իսկ դարնանը, յերը տնտեսութեան մեջ այս կամ այն բանն է հարկավոր՝ քորում և ծոճրակը, քանի վոր փող չի տնտեսել, վարկային կոտպերատիւում փոխառութեան չեն տալիս, վորովհետեւ անգամ չի գրվել: Յեւ նա ստիպված է գնալ կուրակի մոտ՝ ծանր աշխատանքի գնով կամ մեծ տոկոսով փող վերցնելու:

Ահա այստեղ է, վոր պետական խնայողական դրամարկը կարող է սովորեցնել գյուղացուն իր փողերը կաշիւով ծախսել: Խնայողական գրամարկը գրքույկը ունենալով՝ նա արդեն վորոշում է, թե ինչ կարիքների համար պետք է խնայողութեան անի, փողն անտեղի չի ծախսում և չի յեւ գնում դատարկ բանի համար գրամարկից փող վերցնելու, իսկ փողն աչքի տաջն է՝ հաշիւած ու գրված գրքույկում: Յեւ կարելի յե այսպիսով գլխի բնկնել, թե ինչպես փող հավաքել անհրաժեշտ գնումների համար:

ԼԱՎ Ե ՓՈՂ ԿՈՒՏԱԿԵԼ, ՔԱՆ ԹԵ ՀԱՅ

Առանձնապես մանր ձեով փողի անտեղի փառնումը մի չարիք է, վորի դեմ կռիւմ է խնայողաժարկը: Գյուղացիների մոտ կա նաեւ ուրիշ, անմիտ և հնուց մնացած մի սովորութեան՝ այն է՝ կուտակել փոշ թե փող, այլ հաց:

Ընկեր Ռիկովը Խորհրդների Համամիութենական 4-րդ համագումարում մատնանչեց, վոր մոտավոր հաշիւով գյուղացիների մոտ գոյութեան ունի մոտ 700 միլիոն փութ պահեստի հաց: Ի հարկէ չատ լավ է, վոր գյուղացիները հացի ավելցուկներ ունեն: Բայց ինչո՞ւ հացը պահել վորպես մեռած կապիտալ: Յեւ մկները կարող են հացը փչացնել, և հրդեհից կարող է փչնչանալ, և կամաց-կամաց կարող են տանել:

Մինչդեռ ամենից գլխավորն այն է, վոր այնպիսի կապիտալ, ինչպիսին է 700 միլիոն փութ հացը, կարող եր հսկայական ոգուտներ բերել և պետությանը և գյուղացիներին. իսկ դա անոգուտ ընկած է:

Յեթե այդ հացը ծախվեր պետությանը, պետությունը կծախեր արտասահմանում և այդ փողով գյուղացիների համար ավելի շատ անհրաժեշտ գյուղատնտեսական գործիքներ կամ ուրիշ ապրանք կգներ և կամ ավելի շատ վոսկի կկուտակեր: Հացի խոշոր ավելցուկները կմտնեյին շրջանառության մեջ, այլ վոյթե անտեղի կսլաւէյին: Գյուղացիներին կարիք չկա հացի շատ պաշար պահել, քանի վոր անբերության պեպքերի համար պետությունն ինքն է պաշար պահում և ավելի լավ է պահում, քան գյուղացիները:

Հացի վաճառքից ստացած փողերը գյուղացիները կարող էյին դնել անտեսության մեջ և գործադրել մի վորեւէ բարեկարգման վրա, վորպեսզի յեկող տարի ավելի շատ հաց և ուրիշ մթերքներ ստանան: Ահա որինակ՝ գյուղացիական դաշտերում կատարված փորձերը, ցույց են տալիս, վոր մի դեպքատինի վրա 24 փութ սուպերֆոսֆատ (փոշի) գործածելով հացի բերքը բարձրանում է 150 փութ՝ մեկ դեպքատինից: Սուպերֆոսֆատ դնելու համար գյուղացին փող չունի, նա հացը չի ծախում, այլ մեկ-յերկու տարվա համար պաշար է պահում: Բայց, յեթե ծախեր այդ ավելցուկ հացը, ի՞նչպիսի մեծ ոգուտ կստանար գյուղացին իր համար: Նա մեկ-յերկու տարի գործածելով հանքային պարարտանյութեր, գնելով գալիչ մեքենա, կամ որինակ լավ խոզ պահելով կհաներ իր հացի գինը, դեռ մի բան էլ ավել և այդպիսով ավելի կբարեկամվեր իր անտեսությունը: Մինչդեռ հացը պարկած է և դրա վրա վոչինչ չի ավելանում:

Ավելի լավ չի հացի ավելցուկը ծախել, փողը պահ տալ խնադրամարկդին, իսկ յերբ անհրաժեշտ գումարը կուտակվի՝ դրանով պարարտանյութեր, մեքենա և լավ անասուն գնել:

ՊԱՇԱՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔ ՄԻ ԳՆԻՐ, ՀԵՏՈ ԱՎԵԼԻ ՇԱՏ ՈՒ ԵԺԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐ ԿԼԻՆԵՆ.

Գյուղացու մոտ մնացել է նաև մի ուրիշ սովորություն, այն է՝ վոչ միայն հացի պաշար պահել, այլ նին առակով ասած՝ «սև ուրվա համար» նաև ուրիշ բարիքներ էլ հավաքել:

Ապրանքների պահատեսությունն այժմ շարունակ քանում է: Արգյունաբերությունը ամեն ոք ավելացնում է իր արտադրանքը: Ընդհանուր առմամբ վերցրած՝ արգյունաբերությունն այժմ արտադրում է, ինչպես մենք ասացինք՝ ավել, քան պատերազմից առաջ: Բացված են մի շարք նոր ֆաբրիկաներ, մացված է նոր սարքավորում, բարձրանում է բանվորի աշխատանքի արտադրողականությունը: Ահա, թե ինչու ավելորդ է այժմ վախենալ ապրանքների պահատեսյան համար:

Հում նյութերը պահատեսյուն պատճառով արտադրության մեջ լինում են ժամանակավոր ընդհատումներ (ինչպես որինակ մանուֆակտուրայի նկատմամբ): Իսկ այս կամ այն ապրանքի պահատեսությունը լինում է նրանից, վոր չեն կարողանում ամեն տեղ ապրանք հափնել, վորտեղ պահանջ կա, կամ թե, ինչպես հարկն է, լավ չի գրված կոոպերատիվի աշխատանքը և նա վատ է հաշվի առնում ապրանքների պահանջը:

Այս ընդհատումից սովորաբար ոգտվում են սպեկուլյանտները, մասնավոր առևտրականները: Նրանք տարածում են ասեկոսներ այն մասին, վոր ապրանքներ չուտ չեն լինի և հարկավոր է յեղածր մթերել, կամ հավատացնում են, վոր այսինչ ապրանքը վոչ մի տեղ չկա և բոլորովին չի լինելու: Գյուղացիները չտուգում են այդ ապրանքից մթերել թանգ գնով, իսկ խանութպանները հարստանում են: Գյուղացիները հատկապես աշխատում են աղ ու նավթ մթերել: Իսկ աղ և նավթը մեզ մոտ շատ են, քան հարկավոր է: Նման հիմար ասեկոսների պատճառով, մի վորեւէ գավառական քաղաքում կամ շրջանում բոլորը մեկ անգամից վրա կտան

աղ և նախքան մթերելու և իհարկե կտաացվի բնդհատում քանի վոր կոոպերատիվը մի յերկու ամսվա անհրաժեշտ մթերում և կատարել, իսկ ամեն մեկն աշխատում և մթերել կես տարվա համար:

Հենց դրա պատճառով և, վոր այժմ կոոպերատիվներում ապրանքների ժամանակավոր պակաս ավելի շատ է լինում, իսկ գյուղացին իդուր տեղը վատնում է փողը և ապրանքի համար կրկնակի վճարում խանութպանին: Այս բանն իհարկե ձեռնառու չե մասնավոր առևտրականներին: Բոլորովին ձեռնառու չի գյուղացուն պաշարի համար ապրանք գնել այն ժամանակ, յերբ դրանց գները շարունակ իջնում են: Կառավարութունը և կուսակցութունը բոլոր տնտեսական ձեռնարկությունների առաջ մշտական խնդիր են դրել՝ ել ավելի եթանացնել արդյունաբերական ապրանքները: Այժմ արդեն գներն իջել են 10 տոկոսով: Բայց դա բոլորովին չի նշանակում, վոր գները 10 տոկոսով իջեցվել են և զբանով պետք է բավականանալ: Չե՞ վոր շարունակ աշխատանք է տարվում գործարաններում և ֆաբրիկաներում ապրանքների ինքնարժեքն ու արտադրութունը եթանացնելու համար: Ամեն ժամ աշխատանք է տարվում կոոպերատիվ և պետական առևտուրն եթանացնելու համար: Ապրանքների գների իջեցումը կշարունակվի անընդհատ, մինչև չվերանա ապրանքների գների և հացի գների անհամաչափությունը: Այդ պատճառով պարզ է, վոր ով հիմա իրեն համար ամեն տեսակի մթերքների պաշար է հավաքել, հետագայում կփոջմանի, վորովհետև հետո նույն ապրանքները ավելի եթան կլինեն:

Յեվ քանի վոր ապրանքների քանակը շարունակ կավելանա և զբանց գները շարունակ կիջնեն, ապա իսկապես տնտեսության մեջ խնայողություն անել ցանկացողների համար ձեռնառու չե փողը պահ տալ խնայարարկյում և սպասել թե յերբ կշատանան ապրանքները և ավելի եթան կլինեն:

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՓՈՂԸ ԿԱՅՈՒՆ ՓՈՂ Ե:

Այդ սովորությունը—հաց, ապրանքներ կուտակելու սովորությունը մնացել է գյուղացիների մոտ այն ժամանակվանից, յերբ փողն որեց—որ ընկնում էր և խնայել անհնարին էր: Այդպես էր պատերազմի առաջին տարիներին, այդպես էր և հեղափոխության առաջին տարիներին: Իսկ հիմա արդեն ժամանակ է մոռանալ այդ որերը: Վատ փող ունեյինք մենք այն ժամանակ, վորովհետև ցարական պատերազմից և քաղաքացիական կռիվներից հետո վատ տնտեսություն ունեյինք: Հիմա մեր տնտեսությունն էլ է ամուր, փողն էլ է ամուր:

Քայքայման առաջին տարիներում պետության յեկամուտները քիչ էյին և նա ստիպված էր բաց թողնել շատ թղթե փողեր, վորպեսզի զբանցով ծածկի ծախսերը: Այժմ Խորհրդային Պետությունը համարյա թե այնքան յեկամուտ ունի, ինչքան ցարական պետությունը: Բացի այդ, ցարական յեկամուտները զալիս էյին գյուղացիներից, իսկ մեզ մոտ, գյուղացիներից վերցվելիք հարկը վերջին տարիներում պակասում է: Բայց դրա փոխարեն միշտ աճում են արդյունաբերությունից և յերկաթուղային ճանապարհներից ու ժողովրդական տնտեսության այլ ճյուղերից ստացվող յեկամուտները: Հենց նրանով է ամուր մեր խորհրդային ուրբլին, վոր նրա հաստատունն հիմքը կազմում է շարունակ ամրապնդվող ժողովրդական տնտեսությունը:

Խորհրդային կառավարությունը այժմ խիստ հաշվով է թուղթ փող բաց թողնում: Այնքան փող է բաց թողնված, վորքան անհրաժեշտ են զանազան վճարումների՝ արտասահմանյան ապրանքների, փոխառությունների և այլն ու ընդհանրապես առևտրական շրջանառության համար: Իսկ առևտրական շրջանառությունն ընթանում է շատ լավ, դրա համար էլ շրջանառության մեջ ավելորդ փող չի կուտակվում, ինչպես անցյալում էր և փողի գինը չի ընկնում:

Պետությունը նաև վոսկի փողի պաշար է կուտակում: Մեզ մոտ ամբողջ առևտուրը արտասահմանի հետ

կատարվում է վոսկով, դրա համար ել այդ առևտրի ամբողջ ոգուտը գնում է պետական գանձարանին: Իսկ ոգուտ կա. մենք ծախում ենք արտասահմանին ավելի շատ, քան ինքներս աշխտեղ առնում, նշանակում է մենք արտասահմանից ստանում ենք ավելի շատ վոսկի, քան վճարում ենք աշխտեղից յեկած ապրանքների համար:

Ահա այս բոլոր պատճառների հիման վրա կարելի չե համոզված առել, վոր մեր խորհրդային փողը կայուն փող է, ուստի կարելի չե հանգիստ սրտով կուտակել: Յե՛վ ամեն մի գյուղացու համար խնայողության լավագույն միջոցը փողի խնայողությունն է:

ՏԱՆԸ ՓՈՂ ՊԱՀԵԼԸ ՎՈՉ ՁԵՌՆՏՈՒ ՅԵ ՅԵՎ ՎՈՉ ԵԼ ԱՊԱՀՈՎ

Փողը կարելի չե խնայել զանազան տեսակ: Ելի այստեղ գյուղացիների մոտ գոյություն ունի մի հին և հիմար սովորություն, այն է՝ թաղցնել փողը սնտուկներում, մառանում կամ գնել կճուճի մեջ և հորել հողի տակ: Այսպիսի խնայողությունը վոչ ձեռնառու չե և վոչ ել ապահով:

Ձեռնառու չի սա այն պատճառով, վոր յեթե նա փողերը հորում և հողի տակ, ապա դրանք աշխտեղ չեն աճելու: Չեն աճի դրանք վոչ ել սնտուկում կամ նման ուրիշ տեղ: Ինչքան կար, ենքան ել կմնա: Ապահով չի, վորովհետև կարող է փողը և գողացվել և հրդեհի դեպքում՝ այրվել:

Ձեռնառու չե փողի այդպիսի խնայողությունը նաև պետության համար: Այն ուրբիներն ու տասնյակ ուրբիները, վորոնք կուտակել և գյուղացին, կարող եյին գնալ պետական շրջանառության մեջ: Մեզ մոտ հարյուր միլիոն գյուղացիներ կան, նրանց մանր կոպեկներին կարող են համարվել շատ միլիոններ: Այդ փողերով պետությունը կարող է նոր ֆարրիկաներ կառուցել, գյուղին մեքենաներ տալ:

Ուրիշ խոսքով ասած, ամեն մի այսպիսի գյուղացիական ուրբուց կաճեն ժողովրդական տնտեսության մեջ նոր կոպեկներ, իսկ միլիոնավոր խնայողություններից՝ կառաջանան հազարավոր ուրբիներ: Ավանդատուները կստանան իրենց տոկոսները, իսկ նրանց փողերը կոգնեն ամբողջ տնտեսության աճմանը:

Յեթե փողը կուտակես տանը, այս բոլորը չեն լինի: Հետևապես, յեթե ուզում ես դնել քո խնայողություններն քնդհանուր շինարարության մեջ, փողերդ խնայողական դրամարկդում կուտակիր:

3. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՅԽԱՏԱՎՈՐԱԿԱՆ ԳԱՆՁԱՆԱԿԻ ՄԵՋ

ԱՅԼ ԲԱՆ ԵՆ ԱՎԱՆԴՆԵՐԸ ՑԱՐԱԿԱՆ ԽՆԱԴՐԱՄԱՐԿՆԵՐՈՒՄ, ԱՅԼ ԵՆ՝ ԽՈՐՀՐԴԱՅԻՆՈՒՄ

Մենք արդեն ասեցինք, և ամեն մեկն ել գիտե, վոր խորհրդային փողն ամուր փող է: Բայց այդպես չեք, ինչպես ասացինք, ցարական ինքնակալության վերջին տարիներում, յերբ պատերազմի ժամանակ ցարական ուրբին անգաղար սկսեց ընկնել: Այս ընկնող, եժանացող փողերից այնքան ել շուտ չադատվեց և Խորհրդային իշխանությունը: Սա չե այն պատճառներից մեկը, վոր Խորհրդային իշխանությունը չկարողացավ վերադարձնել ավանդատուններին ցարական խնադրամարկներում ունեցած իրենց գումարները: Խորհրդային իշխանությունը կարող եր վճարել միայն արժեքից ընկած փողերով:

Այն ժամանակ փողն արժեքից ընկնում եր բոլորի մոտ՝ թե նրանց մոտ, ովքեր փողը պահ էյին տալիս խնայողական դրամարկներում և թե նրանց մոտ, ովքեր փողը պահում էյին գրպանում: Ամբողջ ազգաբնակչությունը վնասվեց եժանացող փողից: Յեթե պետք է հատուցել վնասները, ապա հարկավոր է հատուցել վոչ

միայն խնադրամարկղի ավանդատուներին, այլև բոլորին: Բայց պատերազմի պատճառած վնասների համար խորհրդային իշխանությունը չէր կարող վճարել: Այն, ինչ տվեց հեղափոխությունը աշխատավորության, բավականին վարձատրում է նրանց:

Բայց միայն այդ պատճառները չէին, վոր խանդարեցին վերագարձնել հին ավանդները: Փաստորեն Սորհրդային իշխանությունը ցարական խնադրամարկղային բանում չեղած հին ավանդներից մոչ մի կոպեկ չի ստացել: Ցարի կառավարությունն իր որոշ ծախսել էր խնայողական դրամարկղները մտցված փողի ամենավերջին կոպեկը:

Ինչի՞ վրա յեր ծախսել: Ամենից շատ պատերազմի վրա: Խնայողական դրամարկղներում դրված ամբողջ փողի կեսից ավելին գնացել էր ցարական զինվորական փոխառությունների վրա: Ավանդների մոտ 31 տոկոսը գնացել էր հողային բանկերին փոխառություններ տալու միջոցով կալվածատերերին վարկ բաց թողնելու համար. մնացած փողը՝ յերկաթուղային ճանապարհների փոխառության վրա:

Այժմ ամեն մեկը գիտե, վոր վոչ թե Սորհրդային իշխանությունը, այլ ցարական կառավարությունն է վատնել հին ավանդները: Իսկ Սորհրդային իշխանությունը տվեց գյուղացիներին կալվածատիրական հողերն ու կալվածատիրական ինվենտարը: Գյուղացիությունը, կարելի չէ ասել, այսպիսի ճանապարհով հետ ստացավ այն միջոցները, վոր ցարական կառավարությունը ծախսել է կալվածատիրական հողերի վրա:

Հիմա ամեն մեկին հասկանալի չէ, թե ինչպիսի հրակայական տարբերություն կա խորհրդային և ցարական կառավարությունների միջև և ժողովրդական միջոցներն ինչպես էին ծախսվում անցյալում և ինչպես ներկայումս: Սորհրդային իշխանության որոշ ժողովրդական խնայողությունները գնում են արդյունաբերության, գյուղատնտեսության, նոր շինարարության համար: Ամբողջ ժողովրդական անտեսությանը դրանք նորանոր յեկամուտներ են տալիս: Իսկ ցարի որոշ ժողովրդական

խնայողությունները գնում էին պատերազմի վրա, կալվածատերերի և Փաբրիկանտների շահերի համար ստեղծված աշխատավորության սպանդանոցի վրա, գյուղացիական դաշտերը ամառի դարձնելու վրա և այն ամենի քայքայման համար, վորը ստեղծված ու հավաքված էր բանվորների և գյուղացիների աշխատանքով:

ԱՎԱՆԴՆԵՐԸ ՄԻՇՏ ԵՒ ԱՆՁԵՌՆԻՄԻՆԻԻ ՅԵՆ

Սորհրդային խնայողական դրամարկղները մոչ միայն ոգնում են ամեն մի աշխատավորին՝ մասնակցելու բնականորեն շինարարության մեջ, այլ դրանք միաժամանակ ավանդատուներին տալիս են բազմաթիվ ոգուտներ ու հարմարություններ, վորոնք չկային ցարական խնայողական դրամարկղներում:

Ամենից հուսալի գանձանակը խնադրամարկղն է: Ինչպես ասացինք սկզբում, դա չի կարելի համեմատել վոչ ամենից ամուր սնտուկի հետ և վոչ էլ ամենից խոր փոսի հետ: Գյուղում դժվար է գյուղացու համար թաղցնել իր մոտ հավաքված մի քանի կոպեկները: Նշանակում է միշտ ել կա փողերը գողանալու վտանգը: Յեվ ամուր սնտուկը կարող են կոտրել և պահած տեղի մասին կարող են իմանալ:

Իսկ հրդեհը: Այստեղ արդեն չես իմանում, թե քեզ աղատես, անասունին աղատես, թե առաջին հերթին փողը փրկես: Գյուղում ինչքան են դեպքեր պատահել, յերբ տարիների աշխատանքով հավաքված փողը այրվել է, և վորքան ավելի խորամանկորեն և թաղցվել փողը, այնքան ավելի դժվար է յեղել դուրս հանել հրդեհի ժամանակ: Քիչ չեն յեղել՝ ճանապարհին, մի տեղից մի ուրիշ տեղ տեղափոխելու ժամանակ կամ անհուսալի մարդուն պարտք տալու միջոցով փող կորցնելու դեպքեր:

Իսկ յեթե փողը պահ տաս խնադրամարկղին և նա այրվի, կամ թե գանձապահը խաբերա դուրս գա և վասնի պետական փողերը՝ դրանք ավանդատուին բո-

լորովին չեն վերաբերի: Ավանդների հաշիվը պետութիւնն է պահում: Պետութիւնն ավանդների համար պատասխանատու յետ ամբողջ գույքով: Պետութիւնը վաղորդը, մինչ խնադրամարկդների բացումը ապահովել է դրանց հատուկ կապիտալով: Յետեւ դրամարկդում մի վորեւե գծախառնութիւն պատահի, միևնույն է, ավանդատուն յերբ ուզում է կատանա իր բոլոր դրամները:

ԱՎԱՆԴՆԵՐԸ ՀԱՐԿԵՐԻ ՅԵՆԹԱԿԱ ՉԵՆ

Յերբեմն գյուղացին ուրիշ բանից է վախենում: Չեն համարի արդյոք իրեն կուլակ, յետեւ նա սկսի փող հավաքել խնադրամարկդում: Արդյոք հարկ չեն դնի իր վրա: Այստեղ ամեն մի գյուղացի պետք է հիշի, վոր կուլակ հաշիվում են վոչ թե նրանք, ովքեր փող են դրնում խնադրամարկդը, այլ նրանք, ովքեր ապրում են ուրիշի աշխատանքով, նրանք, ովքեր իրենց փողը տալիս են ուրիշ գյուղացիներին վաշխառուական տոկոսներով:

Խիստ գաղտնի յետ պահվում խնայրամարկդում ավանդը: Վոչ վորի, բացի ավանդատուից (փող պահ տվողից), խնադրամարկդում չեն ասի, թե ում ինչքան փող ունի պահած: Չեն ասի վոչ Ֆինտեսչին, վոչ ել գալտոային կամ շրջանային հարկային հանձնաժողովներին: Ավանդի գաղտնիքը հրապարակ հանելու համար, ինչպես հանցագործութիւն, Քրեական Որենսգրքի 121-րդ հոդվածով խիստ պատասխանատվութիւն են յենթարկվում: Միայն գատական իշխանութիւնները կարող են ավանդների մասին տեղեկութիւններ պահանջել, այն ել այն գեպքերում, յետեւ ավանդատուն կատարել է վորեւե քրեական հանցագործութիւն: Միայն դատական վնոյլ է միայն ըստ քրեական գործի կարող է արգելել տակ դրվել ավանդը: Առանց գատաբանի վոչ մի իշխանութիւն չի կարող այս կամ այն ձևով դիպչել ավանդին:

Վոչ մի տեսակ հարկեր և տուրքեր ավանդից գանձել, ըստ որեւի չի թույլատրվում: Հետևապես, վոչ մի վախ կամ կասկած չի կարող ունենալ գյուղացին իր ավանդի վերաբերյալ, խնադրամարկդին պահ տված իր աշխատավորական խնայումների համար: Ուզում ես համոզվել խնադրամարկդի հուսալի լինելու մեջ—փողդ պահ տուր և դու կտեսնես, թե խնադրամարկդը խնայողութիւններ պահելու վորքան հավատարիմ և ապահով միջոց է:

ԿՏԱԿԻՐ ՔՈ ԱՎԱՆԴԸ ՈՒՄ ՈՒԶՈՒՄ ԵՍ

Խնադրամարկդների ավանդատուներին տրվում է մի ուրիշ արտոնութիւն ևս: Որենքը թույլ է տալիս մահվան դեպքում կտակել գույքը (նույն թիւում և փողը) միայն վորոչ անձնավորութիւններին (կնոջը, յերեխաներին և իր խնամքի տակ յեղածներին), իսկ խնայողական դրամարկդի ավանդատուն կարող է իր ցանկութիւնը կտակել իր փաղն ում ուզում է, թեկուզ և բոլորովին կողմնակի մարդու:

Դրամարկդին տրվող իր սկզբնական հայտարարութիւն մեջ ավանդատուն ցույց է տալիս, թե ում պետք է տալ ավանդն իր մահվանից հետո:

ԽՆԱԴՐԱՄԱՐԿՂՈՒՄ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՇԱՏ ՀԱՍՈՐԱԿ ԵՆ

Կիսադրագետ գյուղացին կարող է մտածել, թե շատ պիտի գլուխ ցավացնի, վորպեսզի փող դնի խնադրամարկդը կամ հետ ստանա: Վոչ մի գլխացավանք չկա այստեղ: Խնադրամարկդում կանոնները շատ հասարակ են:

Ավանդատուն պահ է տալիս փողը և անմիջապես ստանում է գրքույկ, վորի մեջ գրված է նրա մուծած գումարը: Գրքույկը կորցրեցիր, այդ մասին հայտնի և եեզ նոր գրքույկ կտան: Քո ավանդը միշտ կը հաշիվի քեզ վրա և գրքույկի կորցնելը չի խանգարի, վոր ա-

վանդը ստանա նա, ով մտցրել է: Մյուս կողմից, ուրիշ վոչ վոք առանց քո համաձայնութեան չի կարող քո գրք-բույկով փող ստանալ: Խնադրամարկդում փողի առաջին խօղ մուծման ժամանակ ավանդատուն ստորագրում է գրքի մեջ, իսկ յերբ նա գալիս է փող ստանալու, ամեն անգամ նրա ստորագրութեանը համեմատում են: Իսկ անդրագետ ավանդատուի մասին, նրա անձնականի վերաբերյալ գրում են զանազան տեղեկութիւններ, փորոնք ուրիշ մարդ չի կարող խմանալ: Յեթե ոտար մարդ զո անդրագետի գրքույկով փող ստանալու, ապա նա չի կարող պատասխանել ավանդատուի մասին տրված հարցերին և կեղծիքը կը բացվի:

Բոլոր մուծումներն ու վճարումները նշանակվում են խնայողական գրքույկի մեջ, այնպես փոր ավանդատուն ամեն ժամանակ խմանում է, թե ինչքան փող ունի ինքը գրքույկում:

Կարելի չէ վերցնել ներկայացնողական (վոչ անվանական) խնադրքույկ, փորը հարմար է անդրագետին, փորպեսզի և ինքն առանց վորեւ հարցութործի ամեն անգամ ստանա իր փողը և ուրիշին կարողանա ուղարկել իր փոխարեն փող ստանալու, յեթե ինքը չի կարող գրնալ: Բայց այս գրքույկը ի հարկէ հարկավոր է ավելի բավ պահել, փորպեսզի չընկնի ուրիշների ձեռքը և կողմնակի մարդը գրանով չկարողանա խաբերա ճանապարհով փող ստանալ:

Գրագետ ավանդատուն կարող է փողը պահ տալ ընթացիկ հաշվով: Այն ժամանակ նրան, բացի իր արած մուծման համար տրված գրքույկից, խնադրամարկդում կտան նաև չեկի գրքույկ: Իսկ ունենալով այդպիսի չեկի գրքույկ, ավանդատուն կարող է ինքը չգալ ստանալու իր խնայումները, այլ միայն ստորագրել չեկը և տալ այն մարդուն, փորին յիագորում է ստանալ փողը: Այսպիսի ճանապարհով կարելի չէ վորեւ մեկին փող վճարել, յեթե ձեռքիդ կանխիկ դրամ չկա: Չեկով ստանալու դեպքում խնադրամարկդում միայն ստուգում են ստորագրութիւնը և անմիջապես փողը տալիս են չեկ ներկայացնողին:

ԽՆԱԴՐԱՄԱՐԿՂՈՒՄ ՓՈՂՆ ԱՃՈՒՄ Ե

Փողը խնադրամարկդում մնալով մեծ չափ է տալիս ավանդատունին: Ամեն մի ուրիշու համար նա կստանա մեկ տարում 8 կամ 9 կոպեկ, ուրիշ խոսքով, դրամարկդը վճարում է ավանդի համար 8-9%: 8 տոկոս ստանում է ամեն մի ավանդատու, փորը կարող է իր փողը ստանալ ուղած ժամանակ, իսկ 9 տոկոս ստանում է այն ավանդատուն, փորը գրել է փողը վորոշ ժամանակով, որինակ 3 ամսով կամ կես տարով: Մինչև ժամկետը լրանալը նա արդեն չի կարող փողը հետ վերցնել:

Շեկ ավանդատուն դրեց ավանդը, հաջորդ որվանից դալիս են տոկոսները: Տոկոսներն ավելանում են ամեն մի որվա համար: Տոկոսները կարելի չէ ստանալ ամեն մի ուղած ժամանակ: Տարվա վերջին տոկոսները միացվում են ավանդի հետ և նոր տարվանից տոկոսներն արդեն դալիս են նախկին տոկոսների հետ միացված ավանդի վրա:

Այսպիսով, մեկ տարուց հետո տալ ուրիշին 8 տոկոսով հաշված դառնում է 10 ո. 80 կ., 2 տարուց հետո—11 ո. 66,4 կոպեկ, 3 տարուց հետո—12 ո. 59,7 կոպ. 4 տարուց հետո—13 ո. 60,4 կոպեկ, իսկ 5 տարուց հետո—14 ո. 69,3 կոպեկ:

Ուղած ժամանակ ավանդատուն կարող է խմանալ, թե իրեն վորքան տոկոս է գումարվել:

Ինչպես տեսնում ենք, ավանդատուները մեծ չափ են ստանում: Այնուհետ, ինչպես և բոլոր գործերի մեջ, փորը ձեռնարկում է Խորհրդային իշխանութիւնը, բացառում է յերկրորդանի ոգուտ թե քեզ և թե պետութեանը:

ԱՎԱՆԴԱՏՈՒՆԵՐԻՆ ՇԱՏ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ Ե ՄԱՏՈՒՑՎՈՒՄ

Խնադրամարկդը ելի մի շարք ծառայութիւններ և մատուցում ավանդատուներին:

Խնադրամարկդի միջոցով կարելի չէ վնասել գյուղ-
միասնաբերը, յեթե քեզ այնտեղ հարկը վճարելու համար
բավականին փող ե համարքվել:

Խնադրամարկդի միջոցով վճարումը կատարվում ե
չառ հատարակ: Բնութեմ ես քո հարկաթերթը ե քո գրք-
քույկից դուրս են գրում հարկը վճարելու անհրաժեշտ
գումարը, հարկաթերթում գրում են վճարումը ե ան-
դորձագիր են տալիս հարկը վճարելու մասին: Այս բո-
լորը կատարում ե խնադրամարկդը, ե ինքնին հասկանա-
լի չէ, միայն ավանդատուի կարգադրութեամբ:

Խնադրամարկդում միշտ ել կարելի չէ ե շահող փոխա-
ռությունների պարտատուներ գնել: Բայց պարտատոմ-
սերը նույն այդ փողերն են ե տանը պահելը վտանգավոր
ե: Յեվ այստեղ ել ոգնում ե խնադրամարկդը: Խնադրա-
մարկդը պահելու համար իր ավանդատուներից վերց-
նում ե նրանց փոխառութեան պարտատոմսերը մինչե
100 ո. դումարով ե այսպիսիք պահում ե ձրի:

Խնադրամարկդում կարելի չէ նաե փող ստանալ
պարտատոմսը գրավ դնելով: Կվճարես տոկոսները,
իսկ պարտատոմսը ե չահումը քոնը կլինի:

Այն դեպքում, յերբ պարտատոմսը տրվում ե խնա-
դրամարկդին պահելու համար, ավանդատուի ցանկու-
թեամբ խնադրամարկդն ինքն ե հետեվում խաղաքկում-
ներին, վորի համար մեկ տարում յուրաքանչյուր 10
ուրուց վերցնում ե 2 կոպեկ: Առանձնապես գյուղե-
րում յերբեմն դեպքեր են պատահում, յերբ պարտատոմ-
սերի տերը չի իմանում, վոր ինքը չահել ե, իսկ այս
դեպքում խնադրամարկդն ինքը կը հայտնի նրան պար-
տատոմսի չահելու մասին, ու կվճարի նրան չահած
գումարը ե կամ կգրի նրա գրքույկի մեջ:

Դառնալով խնադրամարկդի ավանդատու, գյուղա-
ցին ահա թե ելի ինչ մեծ ոգնութիւն ե ստանում նրա-
նից: Դրամարկդները իրենց ավանդատուներին իրավա-
բանական տեղեկանքներ են տալիս ամեն տեսակի գոր-
ծերի մասին (հողային, դատական, հարկային ե այլն):
Յեթե ավանդատուն ուզում ե լուծում տալ այն հարցին,
թե ինչպես փարփի փրկե մի վիճելի գործում, կամ ում

դիմի խնդիրքով կամ բողոքով ե այլն, այդ առթիվ նա
կարող ե դիմել խնադրամարկդներին: Դրա համար
Մոսկվայում, Խնադրամարկդների Գլխավոր Վարչու-
թեան կից կազմակերպված ե լավ իրավաբաններից բաղ-
կացած տեղեկատու բյուրո (խորհրդատու): Տեղեկանք
կարելի չէ ստանալ Մոսկվա հետեյալ հասցեյով նամակ
ուղարկելով:

Москва, 6. Настасьинский пер. № 3.

Главное Управление Сберегательн. Кассами,

Справочно-Консультационное Бюро.

Բայց ավանդատուն կարող ե գրավոր կամ բանա-
վոր հարցում անել նաե ամեն մի գյուղական խնադրամ-
արկդին: Յեթե խնադրամարկդում կգծվարանան ան-
միջապես պատասխան կամ խորհուրդ տալ վիճելի
հարցի մասին, ապա այդ գործի վերաբերյալ կը խնդրեն
խնայողական դրամարկդների Գլխավոր Վարչութեան
յեզրակացութիւնը ե այդ յեզրակացութիւնը ստանա-
լուն պես գյուղացուն անհրաժեշտ տեղեկանքը կտան:
Հարցմունք անելու դեպքում հարկավոր ե միայն ցույց
տալ խնադրամարկդին իր խնայողական գրքույկի հա-
մարը:

Այսպիսով ամեն մի հեռավոր գյուղի գյուղացի կա-
րող ե իր դրամարկդի միջոցով անհրաժեշտ խորհուրդ
ստանալ Մոսկվայի իրավաբանից:

Խնայողական դրամարկդն ավանդատուներին հա-
տուկ հարմարութիւններ ե տալիս իրենց բնակութեան
տեղից մի ուրիշ տեղ տեղափոխվելու դեպքերում: Յե-
թե աշխատանք գտնելու համար կամ թե գործով փրկե
տեղ ես գնում, հետդ փող վերցնելը վտանգավոր ե, ա-
մեն ժամանակ կարող են ճանապարհին զողանալ: Փողը
պահ տուր քո բնակավայրի տեղական խնադրամարկդը
ե հետո ամբողջապես կամ մաս-մաս ուղածդ տեղը փո-
խադրիր: Դո գրքույկով փողդ կտան այն խնադրամարկ-
դում, վորտեղ դու փոխադրում ես: Կարող ես խնա-
դրամարկդից վորեւ ուրիշ մարդու փող փոխադրել:

Յերբ մեկնում ես հեռավոր տեղեր, որինակ՝ նոր
հողերում վերաբնակվելու համար ե գուցե ճանապար-

հին փող հարկավոր լինի, այն դեպքում խնադրամարկ-
դից քեզ համար կարող ես վերցնել ակկրեդիտիվ (այդ-
պիսի մի հատուկ վկայական): Այդ ակկրեդիտիվով քեզ
փող կտան այն խնադրամարկդներից, վորոնք ընկնում
են քո ճանապարհի վրա: Մեկ ակկրեդիտիվով արվելիք
գումարը կարող ե լինել վոչ ավել 1000 ուրլուց: Ակ-
կրեդիտիվը հարկավոր ե լավ պահել և յեթե կորչում
ե, անմիջապես հայտնել այն խնադրամարկդին, վոր-
տեղից ստացել ես այն: Ամեն մի ակկրեդիտիվի հետ
տրվում ե հատուկ վերստուգչական թերթ և հարկավոր
ե ակկրեդիտիվն առանձին, իսկ վերստուգչական թերթն
առանձին պահել, քանի վոր ակկրեդիտիվի այս յերկու
կեսերից մեկը կորչելու կամ գողանալու դեպքում, այդ
փաստաթուղթ գանողը չի կարող խնադրամարկդից փող
ստանալ, իսկ ակկրեդիտիվի իսկական տերը կարող ե
ամբողջ գումարը ստանալ այն դրամարկդից, վորտեղից
տրված եր նրան այդ ակկրեդիտիվը:

Վերջերս, Սորհրդային իշխանության կողմից դեկ-
րետ ե հրատարակված, վորով, պետք ել ավելի պար-
զեցնել խնադրամարկդի կանոնները և ավելի մեծ հար-
մարություններ ստեղծել ավանդատուների համար:
Խնադրամարկդները բանկերի պես ավանդատուներից
նոր գանադան դրամական հանձնարարություններ կըն-
դունեն: Նախատեսվում ե խնադրամարկդներում ընդու-
նել ավանդատուներից ամեն տեսակի հարկերի վճա-
րումներ:

Այժմ բաց ե թողնվում խնադրամարկդների հատուկ
պարտավորություններ-սերտիֆիկատներ: Այդ պար-
տավորություններով տոկոսները ավելացվում են սերտի-
ֆիկատի արժեքի վրա այնպես, վոր վեց տարվա ընթաց-
քում կրկնապատկվում ե սերտիֆիկատի արժեքը: Սեր-
տիֆիկատը խնադրամարկդներում կարելի յե ամեն մի
ժամանակ փոխանակել փողի այն արժեքով, վորով նա
գնահատվում ե փոխանակման ուրր, այսինքն այդ ժա-
մանակամիջոցում նրա վրա ավելացած տոկոսներով:
Սերտիֆիկատներ բաց են թողնում 5 և 10 ուրլիանոց-
ներով:

ԿՈՊԵԿՆԵՐՈՎ ԿԱՐՈՂ ԵՍ ՓՈՂ ՀԱՎԱՔԵԼ ԱՎԱՆԴԻ ՀԱՄԱՐ

Խնադրամարկդն ավանդատուներից ամենափոքր ա-
վանդներ ե ընդունում: Այսպիսով վերը նկարագրված
բոլոր արտոնություններն ու հարմարությունները մատ-
չելի յեն համարյա ամեն մի գյուղացու:

Կարելի յե նաե փոստանիչերով (մարկաներով) փող
կուտակել, կպցնելով դրանք մի թղթի վրա կամ հատուկ
քարտերի վրա, վորոնք տրվում են խնադրամարկդում:
Յերբ հավաքես մեկ ուրլու փոստանիչեր, ապա
տար խնադրամարկդը, վորտեղ դրանք կընդունեն վոր-
պես փող և կգրեն քո գրքույկում:

Խնադրամարկդն այժմ տուն տանելու համար գան-
ձանակ ե (КОПИЛКА) տալիս, վորի բանալին պահ-
վում ե խնադրամարկդում: Հենց վոր մի վորոչ գումար
հավաքվի, կարող ես գանձանակը խնադրամարկդ տա-
նել, այնտեղ փողը կհանեն և կգրեն գրքույկիդ մեջ
քո հաշվին:

ԱՎԱՆԴՆԵՐԸ ՄԻՇՏ ԵԼ ԱՎԵԼԱՆՈՒՄ ԵՆ

Խնայողական դրամարկդներն ոգնում են այժմ ա-
մեն մի աշխատավորի՝ ոգտակար կերպով փող խնայե-
լու և այդ փողը պետական չըջանաության մեջ դնելու:
Բայց խորհրդային խնադրամարկդները նաե իրենց ան-
ցած տարիների գործունեության ընթացքում, մինչև
անգամ արժեքից ընկնող փողերի ժամանակ, դարձյալ
խոշոր ծառայություններ են ցույց ավել աշխատավո-
րության: Խնադրամարկդները սկսել են աշխատել 1923
թվի սկզբից, յերբ արդեն բաց եյին թողնված չերվոնեց-
ներ և նախապատրաստություն եր տեսնվում անցնելու
կայուն փողի: Այն ժամանակ խնադրամարկդները փողն
ընդունում եյին կայուն վոսկու հաշվով, չերվոնեցների
հաշվով: Դրա շնորհիվ խնադրամարկդներում ապա-

հովազըվում էլին փողերն արժեքից ընկնելուց: Այսպիսով դեռ այն ժամանակ խնադրամարկդների ավանդատուները կայուն փող ունեյին: Այն ժամանակ շատերը հենց այդ պատճառով էլ իրենց փողերը պահ էյին տալիս խնադրամարկդներին:

Այժմ, կայուն փողի որոք, քաղաքի և գյուղի աշխատավորութունն ավելի ու ավելի յե սկսում հասկանալ խորհրդային խնադրամարկդներում փող պահելու ոգտակարութունն ու շահավետութունը: Դրա համար է, փոր խնադրամարկդներում տարեց-տարի, ամսե-ամիս աճում են ավանդները:

Արդեն 1925 թ. հունվարի 1-ից մինչև այսօր էլ ըզգալիորեն աճել են ավանդները: Այս տարվա ապրիլ ամսվա սկզբին խնադրամարկդներում ավանդների գումարը կազմում էր 278 միլիոն ուրբուլուց ավելի, իսկ ավանդատուների թիվը հասնում էր մինչև 3 միլիոն 200 հազար մարդու:

ԵՎ ԱՎԵԼԻ ՇԱՏ ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ԱՎԱՆԴՆԵՐ

Խնադրամարկդներում խորհրդային բանվորների ու ծառայողների կողմից շատ ավանդ է դրված: Փոքր և միայն գյուղացիական ավանդների գումարը, ինչպես մենք ասացինք այդ մասին սկզբում: Գյուղացիական ավանդները խնադրամարկդներում հասնում է ընդամենը 14 միլիոն ուրբուլու, նշանակում է ավանդների ընդհանուր գումարի միայն 5 և կես տոկոսը: Ավանդատուների թվի մեջ գյուղացիները կազմում են 5-6 տոկոս: Ցարի կառավարութան որոք գյուղացիական ավանդները 700 միլիոն ուրբլի յեր, իսկ բոլոր ավանդատուների 29 տոկոսը գյուղացիներ էյին:

Այդ թվերի վրա պետք է լավ մտածի ամեն մի գյուղացի: Գյուղացիութունն իր խնայողութուններով պետք է ավելի մեծ ոգնութուն ցույց տա իր պետութայնը, փորը փողը հավաքում է ընդհանուր ժողովրդական,

բանվորագյուղացիական կարիքների համար: Բանվորի հետ դաշնակցած բոլոր գյուղացիներն այժմ պետք է ընդառաջ դան պետութայն կոչին՝ իրենց մինչև իսկ մանր ավելցուկներն ու խնայողութունները խնադրամարկդներում տեղավորելով:

Իսկ առաջադեմ հասարակական գործիչ-գյուղացիները պետք է աշխատեն խոսքով և իրենց որինակով համոզել գյուղացիական մասնային խնադրամարկդները ոգտակարութայն մասին և դրանով իսկ իրենց կենցաղում պետական դանձանակները—խնադրամարկդները մուծած խելացի խնայողութայն և խելացի կուտակման որինակ ցույց տան:

Գյուղթղթակիցները պետք է հետեեն գյուղացիների կողմից տնտեսութուններում կատարվող անտեղի ծախսերին և նման դեպքերի մասին գրեն գյուղացիական թերթերում ու պատի լրագրերում: Նրանք պետք է միաժամանակ հետեեն խնադրամարկդների աշխատանքներին, պարզաբանելով գյուղացիութայնը այս աշխատանքի ամբողջ ոգտավետութունը:

Իսկ ո՞վ կարող է առանձնապես հեշտ կերպով խելացի խնայողութայն անել, յեթե վոչ գեղջկուհիները: Ամեն մի գեղջկուհի—տնտեսուհի առանձնապես խորն է զգում ամուսնու կամ վորդու կողմից խմելու և քեֆեր անելու համար կատարվող փողի անտեղի վատնումը: Նա տեսնում է, թե ինչպես աշխատանքով ձեռք բերած փողերը ցրվում են դեռ ու դեն: Նա ավելի շատ կարող է վորեհ նպատակի համար կուտակել նաև մանր փողերով: Թող գեղջկուհին մտածի խնադրամարկդի մասին և ձգտի, վորպեսզի իր ընտանիքում ևս խնայողական գրքույկ լինի:

Իսկ հասարակական գործիչ—գեղջկուհին, ի հարկե կոզնի՝ հասկանալի դարձնելու և բոլոր գեղջկուհիներին բացատրելու խնադրամարկդների ոգտավետութունը:

ԱՄՈՒՐ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԿԱՅՈՒՆ ՌՈՒԲԼԻՆ
ՄԵՐ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆՆ Ե ԹՇՆԱՄԻՆԵՐԻՅ.

Այս գրքույկում մենք պատմեցինք, թե ինչպես և ինչու մենք պետք է մեր ընդհանուր խորհրդային տնտեսության համար փող կուտակենք. մենք արդեն հիշատակեցինք այն մասին, Վոր մենի պետք է հույսներս դնենք միայն մեր ուժերի վրա:

Հատկապես այժմ հարկավոր է դրա մասին հիշել: Ճիշտ է, մենք արտասահմանում ունենք հազարավոր և միլիոնավոր բարեկամ բանվորներ և դյուղացիներ: Բայց չէ՞ վոր դեռ մինչև այժմ ուրիշ յերկրներում իշխանությունը գտնվում է կապիտալիստների՝ ամբողջ աշխատավորության թշնամիների և մեր թշնամիների ձեռքերում:

Կապիտալիստական պետություններին այժմ ամենի ու ամենի յեն սպառնում՝ մի կողմից Չինաստանի հեղափոխությունը, իսկ մյուս կողմից՝ արեւմտյան յերկրների բանվորության աճող դժգոհությունը: Բայց վորքան ամենի յե աճում կապիտալիստների տնտեսությունը հանդեպ խորհրդային յերկրի, նույնքան ամենի յե չարամիտ դառնում նրանց նենգությունները մեր դեմ:

Անգլիական կառավարությունը, կապիտալիստների կառավարությունն արդեն բոլոր տեսակի հարաբերությունները խզել է մեզ հետ: Նա բոլոր ուժերով ձգտում է ստեղծել մեր դեմ կապիտալիստական պետություններից կազմած թշնամիների մի խիտ պատնեշ:

Ճիշտ է, Անգլիային առայժմ չի հաջողվել այդ բանը: Մեր կառավարությունն ամեն կերպ խաղաղություն է պահպանում մյուս պետությունների հետ: Մեզ պաշտպանում են ուրիշ յերկրների թե բանվորները և թե գյուղացիները:

Այնուամենայնիվ Անգլիան կը ձգտի խառնել մեր առեւտրական գործերը և կը խանգարի ուրիշ յերկրներից վարկ ստանալուն: Յեւ քանի կենդանի յե կապի-

տալիստների իշխանությունը, նրանք պետք է մեր դեմ միշտ նոր պատերազմներ պատրաստեն, և մենք պետք է միշտ աչալուրջ լինենք:

Բայց վորքան մենի ամուր լինենք, այնքան պատերազմի վտանգը քիչ կլինի: Ուրիշ յերկրների ժողովուրդները հաստատ կերպով կզան մեր ճանապարհով, յեթե տեսնեն մեր հաջողությունները: Յեւ այդ յերկրների կապիտալիստները կհամոզվեն, Վոր նրանց ամենի ձեռնտու յե մեզ հետ առևտուր անել և խաղաղ ապրել, քան կռվել:

Անգլիայի հետ յեղած խզման մենք պետք է պատահանենք մեր տնտեսությունն ել ամենի ուժեղ ամրապնդելով: Թող անգլիական կառավարությունը մի քիչ սահմանափակի մեզ արտասահմանյան վարկերից, բայց դրա փոխարեն բանվորա-դյուղացիական ազգաբնակչությունը կշատացնի իր պետությանը տրվելիք վարկը:

Ավելի շատ ավանդներ խնայարամաբիղներում, փոխառություններում ու կոոպերացիայում, և մենի սեփական ուժերով կամրապնդենք մեր տնտեսությունը:

Ահա մեր պատասխանը անգլիական կառավարությանը և մեր բոլոր թշնամիներին:

ՀՀ Ազգային գրադարան



NL0205249

